ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

17.03.2022 14:43

ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողներին:

Ողջունելով ուսանողներին՝ Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը ներկայացրեց Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական դպրոցի գործառույթներն ու առանձնահատկությունները:

Ուսանողներն իրենց հետաքրքրությունների շրջանակներում նաև իրազեկվեցին՝ արդարադատության համակարգում փաստաբանի դերի, փաստաբանի գործառույթների, փաստաբան դառնալու ընթացակարգի և անհրաժեշտ պայմանների մասին:

Այնուհետև ուսանողները շրջեցին Փաստաբանների պալատի վարչական շենքում, Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում՝ անմիջականորեն ծանոթանալով աշխատանքային գործընթացին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })